Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1184-02.06.2011-SS-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

2. Բացառությամբ սույն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերի, սույն օրենքը չի կարգավորում վտանգավոր թափոնների հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման իրավական կարգավորումը

1. Աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Թափոնների մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **աղբահանություն**՝ բնակավայրերում գոյացող աղբի հավաքում, պահում, փոխադրում և աղբավայրում տեղադրում.

2) **աղբ**՝ կենցաղային աղբ, ոչ կենցաղային աղբ և խոշոր եզրաչափերի աղբ.

ա. **կենցաղային աղբ**՝ «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ մարդու կողմից սպառման և (կամ) կենսագործունեության արդյունքում առաջացող թափոնները,

բ. **ոչ կենցաղային աղբ**՝

-**արտադրական աղբ**՝ արտադրության և արտադրական և (կամ) սպառման թափոններ, որոնք առաջանում են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում,

-**շինարարական աղբ**՝ քաղաքաշինական գործունեության ընթացքում առաջացող, շինարարական վերանորոգման, շենքերի վերակառուցումից և քանդումից առաջացող թափոններ,

գ. **խոշոր եզրաչափերի աղբ**՝ մարդու կենսագործունեության արդյունքում կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացող արտադրության և սպառման թափոններ, որոնք, հաշվի առնելով դրանց ֆիզիկական հատկությունները (ներառյալ՝ չափը, ծավալը կամ քաշը), անհնար է հավաքել, պահել կամ փոխադրել կենցաղային աղբի համար նախատեսված սովորաբար կիրառվող տեխնիկական միջոցների կիրառմամբ.

3) **սանիտարական մաքրում**՝ համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, պուրակների, հրապարակների, բակերի, մայթերի, անցումների, կամուրջների, սիզամարգերի, լողափերի և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից և փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացումը, փողոցների, կամուրջների, անցումների և մայթերի՝ ձյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը.

4) **օպերատոր**՝ համայնքին աղբահանության և(կամ) սանիտարական մաքրման ծառայություններ մատուցող կազմակերպություն (կազմակերպություններ) կամ անհատ ձեռնարկատեր (անհատ ձեռնարկատերեր):

2. Այն հասկացությունները, որոնք սահմանված չեն սույն օրենքով, ունեն «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հասկացությունների իմաստը:

Հոդված 4. Աղբահանության և սանիտարական մաքրման հիմնական նպատակները և գործընթացի կազմակերպման սկզբունքները

1. Աղբահանության և սանիտարական մաքրման հիմնական նպատակները և գործընթացի կազմակերպման սկզբունքներն են՝

1) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը.

2) բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը.

3) տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիությունը և տարածքների մաքրումը աղբից.

4) աղբահանության և սանիտարական մաքրման պարտադիր և պարբերաբար իրականացումը սույն օրենքով նախատեսված սանիտարական մաքրման սխեմային համապատասխան.

5) աղբահանության վճարովի լինելը.

6) օգտահանման ենթակա թափոնների տեսակավորման, օգտագործման ու վերամշակման համար պայմանների ստեղծումը և աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալների նվազեցումը.

7) աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկվածության ապահովումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից.

8) աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը.

9) ոլորտում միջհամայնքային համագործակցությունը,

10) համայնքային բյուջեի հաշվին սանիտարական մաքրման աշխատանքների իրականացումը:

Հոդված 5. Աղբահանության վճարը

1. Աղբահանության վճարը սույն օրենքով նախատեսված վճարողների կողմից աղբահանության դիմաց սույն օրենքով սահմանված կարգով և սույն օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով համայնքի բյուջե կամ արտաբյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

Հոդված 6. Աղբահանության վճար վճարողների շրջանակը

1. Աղբահանության վճար վճարողներ են համայնքի վարչական տարածքում բնակվող անշարժ գույքի կամ բնակելի այլ շինության սեփականատերհամարվող, կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը և արտոնագրային վճար վճարողը), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը:

Եթե միևնույն գույքի նկատմամբ սույն օրենքի իմաստով աղբահանության վճար վճարող են համարվում մեկից ավելի անձինք, ապա աղբահանության վճարի գծով սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն :

2. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբ առաջացնողները ազատվում են աղբահանության վճարից, եթե նշված աղբը փոխադրվում և տեղադրվում է սեփական միջոցներով՝ սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված թույլտվության հիման վրա կամ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրի հիման վրա:

3. Համայնքի ավագանին կարող է սահմանել աղբահանության վճարի արտոնություններ առանձին կատեգորիայի անձանց համար: Համայնքի ավագանու կողմից անհատական արտոնություններ սահմանելն արգելվում է:

Հոդված 7. Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների ֆինանսավորումը

1. Համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից՝ առանձին ծախսային ծրագրով (ծրագրերով) կամ արտաբյուջետային հաշվից:

Հոդված 8. Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնողը

1. Համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրականացնում են անմիջականորեն համայնքային հիմնարկները կամ համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորը:

2. Սույն հոդվածի 1–ին մասով նախատեսված անձինք կարող են իրականացնել խոշոր եզրաչափերի աղբի հավաքումը և փոխադրումը տվյալ համայնքի ավագանու հաստատած դրույքաչափերին համապատասխան:

3. Իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համայնքի ավագանու սահմանած պահանջներին համապատասխան կարող է իրականացնել շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքումը և փոխադրումը սույն հոդվածով նախատեսված՝ աղբի հավաքման և փոխադրման թույլտվության հիման վրա:

4. Աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ կարող են տրամադրվել նաև շինարարական և խոշոր եզրաչափի աղբի աղբահանության վճար վճարողներին՝ աղբն ինքնուրույն հավաքելու և փոխադրելու համար:

5. Աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը տրամադրում է համայնքի ղեկավարը հայմանքի ավագանու հաստատած պայմաններով և կարգով:

6. Աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանները և կարգը պետք է ուղղված լինեն սույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված նպատակներին և սկզբունքներին ինչպես նաև սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամանակացույցին համապատասխան աղբահանության իրականացման ապահովմանը>:

7. Աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունները տրամադրվում են կոնկրետ աղբահանության վճար վճարողների քանակի համար՝ վճարովի հիմունքներով: Թույլտվությունների համար վճարների դրույքաչափերը սահմանում է ավագանին, որը, սակայն, չի կարող գերազանցել համապատասխան աղբահանության վճար վճարողի կողմից սույն օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հաշվարկվելիք դրույքաչափերի 20 տոկոսը:

ԳԼՈՒԽ 2
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդված 9. Աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպմանը ներկայացվող պահանջները

1. Աղբահանությունը և սանիտարական մաքրումը մշտապես և պարտադիր իրականացվող աշխատանքներ են, որոնք իրականացվում են օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:

Հոդված 10. Աղբի հավաքմանը և պահմանը ներկայացվող պահանջները

1. Կենցաղային աղբը, հավաքվում և/կամ պահվում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում և համայնքի կամ օպերատորի կողմից տրամադրված տարողություններում՝ աղբամաններում, կոնտեյներներում, աղբախցերում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:

2. Համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում առաջացող աղբի համար համայնքի կամ օպերատորի կողմից տեղադրվում են աղբամաններ կամ կոնտեյներներ՝ սանիտարահիգիենիկ կանոններին և նորմերին, ինչպես նաև սանիտարական սխեմային համապատասխան:

3. Ոչ կենցաղային աղբը, ինչպես նաև խոշոր եզրաչափերով աղբը հավաքվում և պահվում է աղբահանության վճար վճարողների ձեռք բերած կամ համայնքի կամ օպերատորի կամ սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց տրամադրած և դրանց համար նախատեսված աղբամաններում կամ կոնտեյներներում, որոնք տեղադրվում են աղբահանության վճար վճարողների համապատասխան տարածքներում, եթե այլ բան սահմանված չէ համայնքի ավագանու կողմից: Ընդ որում, համայնքի կամ օպերատորի կողմից աղբամանները կամ կոնտեյներները աղբահանության համար վճարողների պահանջով կարող են տրամադրվել վարձակալության հիմունքներով:

4.Աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների (կոնտեյներների) տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնները և նորմերի պահանջները: Աղբը պետք է փոխադրվի մինչև կոնտեյներների ամբողջությամբ լցվելը:

5. Արգելվում է աղբը պահել և թափել դրա համար չսահմանված կամ չնախատեսված վայրերում:

Հոդված 11. Աղբի փոխադրմանը ներկայացվող պահանջները

1. Աղբի փոխադրման իրականացումը պետք է կազմակերպվի՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը:

Հոդված 12. Աղբի տեղադրմանը ներկայացվող պահանջները

1. Աղբը տեղադրվում է օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում կամ ենթարկվում է վերամշակման:

2. Աղբավայրերում աղբի տեղադրումը իրականացվում է աղբավայրերի շահագործման և սանիտարահիգիենիկ կանոնների պահանջների պահպանմամբ:

3. Արգելվում է աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում:

Հոդված 13. Սանիտարական մաքրման սխեմային (ծրագրին) ներկայացվող պահանջները

1. Սանիտարական մաքրման սխեման (ծրագիրը) պարունակում է հետևյալ հիմնական տարրերը. համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը, սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները, սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը:

2. Սանիտարական մաքրման սխեման հաստատում է համայնքի ավագանին:

ԳԼՈՒԽ 3
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԻՄՔԸ, ԴՐԱ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 14. Աղբահանության վճարի դրույքաչափը

1. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ առավելագույնը ամսական 400 դրամ, , կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար առավելագույնը 25 դրամ.

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ առավելագույնը 3000 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ առավելագույնը 10000 դրամ, կամ

.

:

2. Աղբահանության վճար սահմանելու համար կիրառվող մեթոդները և աղբահանության վճարի դրույքաչափերը յուրաքանչյուր համայնքի համար սահմանվում է համայնքի ավագանու կողմից օրենքով սահմանված կարգով՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի սահմաններում:

3. Աղբի տարբեր տեսակների համար կարող են սահմանվել տարբեր դրույքաչափեր: Ընդ որում, տարբեր դրույքաչափեր սահմանելիս կարող են հաշվի առնվել նաև անշարժ գույքի նպատակային կամ գործառնական նշանակությունը,:

Հոդված 15. Աղբահանության վճարի հաշվարկման կարգը

1. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է օրացուցային ամիսը:

2. Անշարժ գույքի սեփականատիրոջ ցանկացած հիմքով փոփոխության դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում աղբահանության վճարի գծով նախկին սեփականատիրոջ չկատարած պարտավորությունը կամ գերավճարի իրավունքը:

3. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալի կամ անհատույց օգտագործողի աղբահանության վճարի գծով պարտավորությունները փոխանցվում են համապատասխանաբար պետությանը կամ տեղական ինքնակառավարման մարմնին, եթե այլ բան նախատեսված չէ նոր վարձակալի կամ անհատույց օգտագործողի հետ կնքված գործարքով:

4. Աղբահանության վճար վճարողի պարտավորությունը դադարում է դրամական միջոցների վճարմամբ կամ ֆիզիկական անձ համարվող վճարողի մահվամբ, եթե՝

1) վճարողի անշարժ գույքն անժառանգ ճանաչվելու հիմքով փոխանցվել է համայնքին ի սեփականություն.

2) պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման՝ մահացածի իրավունքը այլ անձի չի փոխանցվել:

Հոդված 16. Աղբահանության վճարի՝ հաշվարկողի կողմից սխալ հաշվարկելու դեպքում պակաս վճարված աղբահանության վճարի գումարների վերահաշվարկումն ու վճարումը

1. Աղբահանության վճարի հաշվարկողի կողմից սխալ հաշվարկելու արդյունքում պակաս վճարված աղբահանության վճարի՝ գրավոր տեղեկացնելու օրվա դրությամբ հաշվարկված

1) գումարները վճարում է աղբահանության վճար վճարողը՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան երեք տարվա համար, եթե սխալ հաշվարկի համար պատճառ է հանդիսացել աղբահանության վճար վճարողի կողմից ներկայացված կեղծ տվյալները

2) գումարների վճարումն ուշացնելու համար հաշվարկված տույժերը վճարում է հաշվարկող մարմինը, բացառությամբ սույն մասի 3-րդ կետում նշված դեպքերի.

3) գումարների վճարումն ուշացնելու տույժեր չեն հաշվարկվում, եթե հաշվարկող մարմինը տեղական ինքնակառավարման մարմինն է.

4) սույն մասին 1-ին և 2-րդ կետերում նշված գումարները ներառվում են և ենթակա են վճարման ընթացիկ ամսվա վճարի հետ: Աղբահանության վճար վճարողի կամ հաշվարկող մարմնի դիմումի առկայությամբ դիմումատուի հետ համայնքի ղեկավարը կարող է 10 աշխատանքային օրվա ընթացքում կազմել վճարման ժամանակացույց, որով սույն կետում նշված գումարների մարման ժամկետը կարող է սահմանվել ժամանակացույցի կնքման օրվանից առավելագույնը 6 ամիս: Սահմանված ժամանակացույ-ցի՝ աղբահանության վճար վճարողի կողմից առաջին իսկ խախտման դեպքում կիրառվում են սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տույժերը:

Հոդված 17. Աղբահանության վճարի գերավճարները

1. Աղբահանության վճարի ավել մուծված գումարները (ներառյալ՝ աղբահանության վճարի հաշվարկողի կողմից սխալ հաշվարկելու դեպքում ավել վճարված գումարները) հաշվարկվում են որպես կանխավճար կամ այդ վճարը վճարողի դիմումի հիման վրա ենթակա են համայնքի կողմից

վերադարձման՝ դիմումը տալուն հաջորդող 30 օրվա ընթացքում, անկախ օպերատորի հետ պայմանագրի լուծման հանգամանքից:

Հոդված 18. Աղբահանության վճարի վճարման կարգը

1. Աղբահանության վճարը պետք է վճարվի կանխիկ կամ անկանխիկ յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդող ամսվա 15 -ը:

2. Աղբահանության վճարի դրույքաչափի կամ դրա տեսակի փոփոխման դեպքում աղբահանության վճար հաշվարկողը մինչև հաջորդող ամսվա 10-ը աղբահանության վճար վճարողներին իրազեկում է հաշվարկված վճարի չափի մասին:

Հոդված 19. Աղբահանության վճար վճարողներին հաշվառողները, աղբահանության վճարը հաշվարկողները և աղբահանության վճարի գանձումը

1. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը և համայնքի բյուջե փոխանցումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները:

2. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ համայնքի ղեկավարի ներկայացմամբ և համայնքի ավագանու կողմից կարող են վերապահվել օպերատորին կամ այլ կազմակերպությանը (կազմակերպություններին):

3. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարի հաշվարկումը, ինչպես նաև այդ վճարի գանձումը օպերատորի կամ այլ կազմակերպության կողմից իրականացվելու դեպքում օպերատորը կամ տվյալ կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմնին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակա-շրջանում իրենց կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

4. Աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը սահմանում է համայնքի ավագանին:

5. Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

ԳԼՈՒԽ 4
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 20. Աղբահանության վճար վճարողների հիմնական իրավունքները և պարտականությունները

1. Աղբահանության վճար վճարողների հիմնական իրավունքներն են՝

1) ինքնուրույն հաշվարկել իրենց կողմից կատարվող վճարի չափը և ստուգել դրա համապատասխանությունը կատարված հաշվարկների հետ.

2) ծանոթանալ իրենց կողմից կատարվող վճարի չափի և հաշվարկների հետ, ինչպես նաև տեղեկություններ ստանալ իրենց կողմից կատարված վճարումների մասին.

3) օրենքով սահմանված կարգով բողոքարկել աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման՝ իրեն վերաբերող գործողությունները.

4) համայնքից կամ օպերատորից պահանջել աղբահանությունը կազմակերպողի պարտավորությունների ոչ պատշաճ կատարելու հետևանքով սեփական միջոցների հաշվին կատարած աղբահանության ծախսերի հատուցում:

2. Աղբահանության վճար վճարողները պարտավոր են՝

1) սույն օրենքով սահմանված ժամկետում և սահմանված դրույքաչափով վճարել աղբահանության վճարը.

2) խոշոր եզրաչափի աղբի գոյացման դեպքում պատվիրել նշված աղբի՝ համապատասխան կոնտեյներով փոխադրումը.

3) աղբը պահել և թափել դրա համար սահմանված կամ նախատեսված վայրերում:

Հոդված 21. Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու համար

1. Աղբահանության վճարի վճարումը սույն օրենքով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը, իսկ սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ աղբահանության վճար հաշվարկողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տույժերը հաշվարկվում, հաշվառվում և գանձվում են աղբահանության վճարի համար սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով:

3. .<3 Օպերատորը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ չկատարված կամ ոչ պատշաճ կատարված աղբահանության յուրաքանչյուր դեպքի համար հիսուն հազար դրամի չափով, եթե օպերատորի և համայնքի միջև կնքված պայմանագրով, ավելի մեծ տուգանք սահմանված չէ:

Տուգանքի վճարումն օպերատորին չի ազատում չկատարված կամ ոչ պատշաճ կատարված պարտավորության կատարումից: Օպերատորի պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը:>

4. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված անձինք համայնքի ղեկավարի որոշմամբ կարող են զրկվել աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունից սույն օրենքով նախատեսված՝ աղբի հավաքմանը կամ փոխադրմանը ներկայացվող պահանջները մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ խախտելու դեպքում:

ԳԼՈՒԽ 5

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 22. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո համայնքի ու աղբահանություն և(կամ) սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող համապատասխան կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերը գործում են, կամ դրանց գործողությունը կարող է երկարաձգվել, ինչպես նաև համանման պայմանագրեր կարող են կնքվել մինչև սույն օրենքով սահմանված պայմաններին ու պահանջներին համապատասխան օպերատորի հետ կնքված պայմանագրով նախատեսված օպերատորի կողմից պարտավորությունների կատարման ժամկետի սկիզբը:

3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, համայնքի ավագանին սահմանում է աղբահանության դրույքաչափերը, ընդ որում՝ աղբահանության վճարը հաշվարկվում է աղբահանության դրույքաչափը սահմանելուն հաջորդող ամսվանից և գանձվում է սույն օրենքով սահմանված կարգով:

4. Սույն օրենքի ընդունումը պետության համար չի առաջացնում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փոխհատուցման պարտավորություն:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>,<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>,<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>,<Բազմաբնակարան շենքի կառավարման մասին< Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին> և <Տեղական տուրքերի և վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին> ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ 1-ին ընթերցումից հետո ստացված դիտողությունների և առաջարկությունների

Առաջարկության հեղինակ	Նախագծի հոդվածը, մասը, կետը, ենթակետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Նախագծի նախկին դրույթը	Նախագծի վերաբերյալ առաջարկությունը կամ դիտողությունը	Եզրակացություն
ՀՀ Ազգային ժողովի Նախագահ ÐáíÇÏ ²µñ³Ñ³ÙÛ³Ý	<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին> ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս	Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը վերաբերում է օրենքի կարգավորման առարկային, որտեղ հստակ ամրագրված է, եթ ինչ հարաբերություններ է կարգավորում, և ինչ է սահմանում օրենքը՝ աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառում: Նշված մասը սահմանում է նաև պատասխանատվություն չվճարելու համար, մինչդեռ, օպերատորի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում պատասխանատվություն սահմանված չէ: Այս կապակցությամբ առաջարկում եմ 1-ին մասը, <Պատասխանատվություն չվճարելու> բառերից հետո լրացնել <,պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու> բառերով:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը <Պատասխանատվություն չվճարելու> բառերից հետո լրացվել <,պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու> բառերով:
	<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին> ՀՀ օրենքի	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մաս.	Նախագծի 6-րդ հոդվածում 1-ին մասով սահմանվում է	Ընդունվել է: Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին

	նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մաս, 14-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետ	<Աղբահանության վճար վճարողներ են համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի կամ բնակելի այլ շինության սեփականատերհամարվող, կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը: Եթե միևնույն գույքի նկատմամբ սույն օրենքի իմաստով աղբահանության վճար վճարող են համարվում մեկից ավելի անձինք, ապա աղբահանության վճարի գծով սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն> : Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետ. <1) կենցաղային աղբի համար՝ ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող յուրաքանչյուր բնակչի համար՝ առավելագույնը	աղբահանության վճար վճարողների շրջանակը, սակայն անհայտ է մնում, թե ինչպես պետք է լուծվի հաշվառում ունեցող, սակայն ՀՀ-ում չբնակվող քաղաքացիների հետ պայմանագրային հարաբերությունների հարցը, քանի որ աղբահանության վճարների չկատարման համար, պատասխանատվության առաջացման հիմքը, տվյալ պայմանագիրն է: Այս կապակցությամբ առաջարկում եմ Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի <համայնքի վարչական տարածքում> բառերից հետո ավելացնել <բնակվող> բառը, քանի որ սկզբունքորեն ընդունելի չէ չմատուցված ծառայության դիմաց հատուցում պահանջել, տվյալ դեպքում՝ համայնքի վարչական տարածքում չբնակվող (և, բնականաբար, աղբ չառաջացնող) ֆիզիկական անձից աղբահանության վճարի գանձման մոտեցումը: Տվյալ առաջարկության հետ կապված, կարծում եմ անհրաժեշտ է Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետից հանել <ընդ որում, եթե տվյալ հասցեում որևէ անձ հաշվառված չէ, ապա տվյալ բնակելի շինության կամ բնակարանի համար կարող է հաշվարկվել աղբահանության վճար մեկ բնակչի համար սահմանված դրույքաչափով,> բառերը:	մասը <համայնքի վարչական տարածքում> բառերից հետո լրացվել է <բնակվող> բառով, իսկ Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետից հանվել է <ընդ որում, եթե տվյալ հասցեում որևէ անձ հաշվառված չէ, ապա տվյալ բնակելի շինության կամ բնակարանի համար կարող է հաշվարկվել աղբահանության վճար մեկ բնակչի համար սահմանված դրույքաչափով,> բառերը:

		ամսական 400 դրամ, ընդ որում, եթե տվյալ հասցեում որևէ անձ հաշվառված չէ, ապա տվյալ բնակելի շինության կամ բնակարանի համար կարող է հաշվարկվել աղբահանության վճար մեկ բնակչի համար սահմանված դրույքաչափով, կամ>		
	Նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ մաս	Աղբի տարբեր տեսակների համար կարող են սահմանվել տարբեր դրույքաչափեր: Ընդ որում, տարբեր դրույքաչափեր սահմանելիս կարող են հաշվի առնվել նաև անշարժ գույքի չափերը, նպատակային կամ գործառնական նշանակությունը, հարկայնությունը, հեռավորությունը աղբավայրից, աղբահանության վճար վճարողների և նրանց գործունեության առանձնահատկությունները:	Նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում է <Տեղական տուրքերի և վճարների մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասին, համաձայն որի, <Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական վճարների միասնական դրույքաչափեր:>: Բացի այդ տվյալ մոտեցմամբ առաջնորդվելու դեպքում, գործնականում կարող է ընդհուպ սահմանվել աղբահանության անհատական դրույքաչափեր, ինչը միանշանակ ընդունելի չէ: Այս կապակցությամբ առաջարկում եմ հանել Նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է մասամբ: Նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. <Աղբի տարբեր տեսակների համար կարող է սահմանվել տարբեր դրույքաչափեր: Ընդ որում, տարբեր դրույքաչափեր սահմանելիս կարող են հաշվի առնվել անշարժ գույքի նպատակային կամ գործառնական նշանակությունը:>:
	Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	1. Աղբահանության վճարի հաշվարկողի կողմից սխալ հաշ-վարկելու արդյունքում պակաս վճարված աղբահանության վճարի՝ գրավոր տեղեկացնելու օրվա դրությամբ հաշվարկված 1) գումարները վճարում է աղբահանության վճար վճարողը՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան երեք տարվա համար:	Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ամրագրված մոտեցումը չի կարելի ընդունելի համարել, քանի որ պակաս վճարված աղբահանության վճարի պատասխանատվությունը, պետք կրի դրանում մեղավոր կողմը, տվյալ դեպքում՝ աղբահանության վճարի հաշվարկողը, իսկ այս դրույթի <հիմնավորման> համար	Ընդունվել է: Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. <1) գումարները, վճարում է աղբահանության վճար վճարողը՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի քան երեք տարվա համար, եթե սխալ հաշվարկի պատճառը հանդիսացել է աղբահանության վճար վճարողի

			Նախագծի 20-րդ հոդվածի 1-ի մասով տրված իրավունքները (ըստ որի վճարողներն իրավունք ունեն ինքնուրույն հաշվարկել կատարվող վճարի չափը, ստուգել կատարված հաշվարկների համապատասխանությունն իր հաշվարկների հետ և դատական կարգով բողոքարկել դրանք) ոչ միայն չի արդարացնում որդեգրված մոտեցումը, այլև անհարկի և անիմաստ վարչարարության անհրաժեշտություն և կոռուպցիոն ռիսկեր է առաջացնում: Այս կապակցությամբ առաջարկում եմ որդեգրել ամենապարզ մոտեցումը՝ այն է հաշվարկը կատարում է համայնքը, ինչը նրա պարտականությունն է, պարտավոր է կատարել ճիշտ հաշվարկ, իսկ սխալ հաշվարկ կատարելու արդյունքում պակաս ստացված վճարի չափով էլ հենց ինքը պետք է կրի պատասխանատվություն՝ իր բյուջեից ծածկելով պակաս հավաքագրված միջոցների արդյունքում առաջացած դեֆիցիտը (հենց վերջինիս էլ կստիպի կատարել ճիշտ հաշվարկ և կզրկի կոռուպցիոն կոնկրետ սխեմաների կիրառման գայթակղությունից):	կողմից ներկայացված կեղծ տվյալները:>:
	Նախագծի 21-րդ հոդվածի մասերի համարակալում և 4-րդ մաս	1. Աղբահանության վճարի վճարումը սույն օրենքով սահմանված ժամկետներից ուշաց-նելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար	Նախագծի 21-րդ հոդվածի մասերի համարակալումը անհրաժեշտ է համապատասխանեցնել <Իրավական ակտերի մասին>	Ընդունվել է: Շտկվել է Նախագծի 21-րդ հոդվածի մասերի համարակալումը (4 մաս) և 3-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

		աղբահանության վճար վճարողը, իսկ սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ աղբահանության վճար հաշվարկողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար: 3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տույժերը հաշվարկվում, հաշվառվում և գանձվում են աղբահանության վճարի համար սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով: 4. Օպերատորի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատասխանատվությունը, ինչպես նաև աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ մատուցելու վերաբերյալ համայնքի և օպերատորի միջև կնքած պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը սույն օրենքով չսահմանված մասով կարգավորվում է պայմանագրով: 5. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված անձինք համայնքի ղեկավարի որոշմամբ կարող են զրկվել աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունից սույն օրենքով նախատեսված՝ աղբի հավաքմանը կամ փոխադրմանը ներկայացվող	<< օրենքի պահանջներին, իսկ ամրագրված 4-րդ մասը հակասում է << Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետին համաձայն որի.<պատասխանատվության տեսակները,չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը կարող է սահմանվել բացառապես օրենքով>, բացի այդ Նախագծով օպերատորի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար որևէ պատասխանատվություն սահմանված չէ: Հետևաբար, օպերատորի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության կարգը, ինչը սույն նախագծի հիմքերից մեկն է, պետք է լրացվի Նախագծում: Այդ կապակցությամբ առաջարկում եմ Նախագծի 21-րդ հոդվածի 4-րդ մասը, որն իրականում պետք է լինի 3-րդ մաս, շարադրել հետևյալ խմբագրությամբ.<4 Օպերատորը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ չկատարված կամ ոչ պատշաճ կատարված աղբահանության	.<3 Օպերատորը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ չկատարված կամ ոչ պատշաճ կատարված աղբահանության յուրաքանչյուր դեպքի համար հիսուն հազար դրամի չափով, եթե օպերատորի և համայնքի միջև կնքված պայմանագրով, ավելի մեծ տուգանք սահմանված չէ: Տուգանքի վճարումն օպերատորին չի ազատում չկատարված կամ ոչ պատշաճ կատարված պարտավորության կատարումից: Օպերատորի պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը:>

		պահանջները մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ խախտելու դեպքում:	յուրաքանչյուր դեպքի համար հիսուն հազար դրամի չափով, եթե օպերատորի և համայնքի միջև կնքված պայմանագրով, ավելի մեծ տուգանք սահմանված չէ: Տուգանքի վճարումն օպերատորին չի ազատում չկատարված կամ ոչ պատշաճ կատարված պարտավորության կատարումից: Օպերատորի պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականանբում է համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը:>	
ԱÄ å³ï ·³Ù³íáñ ¶³Éáõëï ê³Ñ³ÏÛ³Ý	Նախագծի 1-ի հոդվածի 1-ին մաս և 4-րդ հոդված	Նախագծի 1-ի հոդվածի 1-ին մաս. <Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:>: Նախագծի 4-րդ հոդված. <1. Աղբահանության և	Նախագծի 1-ի հոդվածի 1-ին մասի <սկզբունքները> բառերից առաջ առաջարկվում է ավելացնել <գործընթացի կազմակերպման> բառերը, քանի որ սույն օրենքը բուն <աղբահանության և սանիտարական մաքրման սկզբունքները> չի սահմանում և չի կարող սահմանել (Նույն դիտողությունը վերաբերում է Նախագծի 4-րդ հոդվածին):	Ընդունվել է: Նախագծի 1-ի հոդվածի 1-ին մասը և 4-րդ հոդվածի վերնագիրը, ինչպես նաև 1-ին մասը <սկզբունքները> բառից առաջ լրացվել է <գործընթացի կազմակերպման> բառերով:

		սանիտարական մաքրման հիմնական նպատակները և սկզբունքներն են՝ 1) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա կոմունալ թափոնների բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը. 2) բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը. 3) տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիությունը և տարածքների մաքրումը աղբից. 4) աղբահանության և սանիտարական մաքրման պարտադիր և մշտապես իրականացումը սույն օրենքով նախատեսված սանիտարական մաքրման սխեմային համապատասխան. 5) աղբահանության վճարովի լինելը. 6) օգտահանման ենթակա թափոնների տեսակավորման, օգտագործման ու վերամշակման համար պայմանների ստեղծումը և աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալների նվազեցումը. 7) աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկվածության ապահովումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից. 8) աղբահանության և		

		սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը. 9) ոլորտում միջհամայնքային համագործակցությունը, 10) համայնքային բյուջեի հաշվին սանիտարական մաքրման աշխատանքների իրականացումը:>		
	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ա), բ,) և գ) ենթակետեր	2) **աղբ՝** կենցաղային աղբ, ոչ կենցաղային աղբ և խոշոր եզրաչափերի աղբ. ա. **կենցաղային աղբ՝** «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ մարդու կենսագործունեության ծագմամբ առաջացող սպառման թափոնները, բ. **ոչ կենցաղային աղբ՝** -**արտադրական աղբ՝** արտադրության և սպառման թափոններ, որոնք առաջանում են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում, -**շինարարական աղբ՝** քաղաքաշինական գործունեության ընթացքում առաջացող, շինարարական վերանորոգման, շենքերի վերակառուցումից և քանդումից առաջացող թափոններ, գ. **խոշոր եզրաչափերի աղբ՝** մարդու կենսագործունեության ծագմամբ կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացող արտադրության և սպառման թափոններ, որոնք, հաշվի առնելով	Անհրաժեշտ է ճշտել և հստակեցնել 1-ին մասի 2-րդ կետի ա) ենթակետով տրված՝ <կենցաղային աղբ> հասկացությունը, մասնավորապես՝ առաջարկվում է <մարդու կենսագործունեությամբ ծագմամբ առաջացող թափոնները> բառերը փոխարինել <մարդու կողմից սպառման և (կամ) կենսագործունեության արդյունքում առաջացող թափոններ> բառերով; 1-ին մասի 2-րդ կետի բ) ենթակետով տրված՝ <արտադրական աղբ> հասկացության մեջ <սպառման> բառից առաջ անհրաժեշտ է ավելացնել <արտադրական> բառը, այլապես արտադրական աղբը, սպառման արդյունքում առաջացող աղբի մասով, կնույնացվի կենցաղային աղբի հետ: 1-ին մասին 2-րդ կետի գ) ենթակետով տրված <խոշոր եզրաչափի աղբ> հասկացության <մարդու կենսագործունեության	Ընդունվել է: Նախագծի 1-ին մասի 2-րդ կետի՝ ա)ենթակետի <մարդու կենսագործունեությամբ ծագմամբ առաջացող թափոնները> բառերը փոխարինվել է <մարդու կողմից սպառման և (կամ) կենսագործունեության արդյունքում առաջացող թափոններ> բառերով; բ) ենթակետը <սպառման> բառից առաջ լրացվել է <արտադրական և (կամ)> բառերը: գ) ենթակետի <մարդու կենսագործունեության ծագմամբ> բառերը փոխարինվել է <մարդու կենսագործունեության արդյունքում> բառերով:

		դրանց ֆիզիկական հատկությունները (ներառյալ՝ չափը, ծավալը կամ քաշը), անհնար է հավաքել, պահել կամ փոխադրել կենցաղային աղբի համար նախատեսված սովորաբար կիրառվող տեխնիկական միջոցների կիրառմամբ.	ծագմամբ> բառերն առաջարկվում է փոխարինել <մարդու կենսագործունեության արդյունքում> բառերով:	
	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետեր	1) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա կոմունալ թափոնների բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը. 4) աղբահանության և սանիտարական մաքրման պարտադիր և մշտապես իրականացումը սույն օրենքով նախատեսված սանիտարական մաքրման սխեմային համապատասխան.	Անհրաժեշտ է սահմանել <կոմունալ թափոններ> հասկացություն, ինչպես նաև <մշտապես> բառը փոխարինել <պարբերաբար> բառով:	Ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <կոմունալ թափոններ> բառերը փոխարինվել է <աղբ> բառով, իսկ <մշտապես> բառը փոխարինել <պարբերաբար> բառով:
	Նախագծի 5-րդ հոդված	Աղբահանության վճարը սույն օրենքով նախատեսված՝ վճարողների կողմից աղբահանության դիմաց սույն օրենքով սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ վճարվող վճարն է:	Առաջարկվում է Նախագծի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <Աղբահանության վճարը սույն օրենքով նախատեսված վճարողների կողմից աղբահանության դիմաց սույն օրենքով սահմանված կարգով և սույն օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով համայնքի բյուջե կամ արտաբյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:>:	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածը շարադրվել հետևյալ խմբագրությամբ. <Աղբահանության վճարը սույն օրենքով նախատեսված վճարողների կողմից աղբահանության դիմաց սույն օրենքով սահմանված կարգով և սույն օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով համայնքի բյուջե կամ արտաբյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:>:
	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մաս. <Աղբահանության վճար	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի հստակեցման նպատակով	Ընդունվել է: Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը <տիրապետող> բառից

		վճարողներ են համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի կամ բնակելի այլ շինության սեփականատեր համարվող, կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը: Եթե միևնույն գույքի նկատմամբ սույն օրենքի իմաստով աղբահանության վճար վճարող են համարվում մեկից ավելի անձինք, ապա աղբահանության վճարի գծով սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն> :	<տիրապետող> բառից հետո անհրաժեշտ է ավելացնել <կամ օգտագործող> բառերը (ինչպես նաև Նախագծի համապատասխան այլ մասերում), իսկ <անհատ ձեռնարկատերեր> բառերից հետո՝ <և արտոնագրային վճար վճարողների> բառերը:	հետո լրացվել է <կամ օգտագործող> բառերով ինչպես նաև Նախագծի համապատասխան այլ մասերը, իսկ <անհատ ձեռնարկատերեր> բառերից հետո՝ <և արտոնագրային վճար վճարողների> բառերը:
	Նախագծի 7-րդ հոդված	Համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից՝ առանձին ծախսային ծրագրով (ծրագրերով) կամ արտաբյուջետային հաշվից կամ իրավաբանական անձանց՝ պայմանագրի հիման վրա կատարված վճարներով:	Առաջարկվում է լրամշակել:	Ընդունվել է: Նախագծի 7-րդ հոդվածը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ. <1. Համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից՝ առանձին ծախսային ծրագրով (ծրագրերով) կամ

				արտաբյուջետային հաշվից:
	Նախագծի 8-րդ հոդված 2-րդ մաս	Սույն հոդվածի 1–ին մասով նախատեսված անձը պարտավոր է իրականացնել խոշոր եզրաչափերի աղբի հավաքումը և փոխադրումը տվյալ համայնքի ավագանու հաստատած դրույքաչափերին համապատասխան:	Առաջարկվում է <անձը> բառը փոխարինել <անձինք> բառով, քանի որ նույն հոդվածի 1-ին մասում երկու տարբեր անձանց մասին է խոսքը գնում:	Ընդունվել է: Նախագծի 8-րդ հոդվածի <անձը> բառը փոխարինվել է <անձինք> բառով
	Նախագծի 8-րդ հոդվածի 6-րդ մաս	Աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանները և կարգը պետք է ուղղված լինեն սույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված նպատակներին և սկզբունքներին համապատասխան աղբահանության կայուն իրականացման ապահովմանը:	Առաջարկվում է <համապատասխան աղբահանության կայուն իրականացման ապահովմանը> բառերը փոխարինել <,ինչպես նաև սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամանակացույցին համապատասխան աղբահանության իրականացման ապահովմանը> բառերով:	Ընդունվել է: Նախագծի 8-րդ հոդվածի 6-րդ մասի<համապատասխան աղբահանության կայուն իրականացման ապահովմանը> բառերը փոխարիվել է <,ինչպես նաև սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամանակացույցին համապատասխան աղբահանության իրականացման ապահովմանը> բառերով:
	<ՀՀ Հանրապետության բյուջետային համակարգի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>ՀՀ օրենքի նախագծի վերնագիր	<ՀՀ Հանրապետության բյուջետային համակարգի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>ՀՀ օրենք	Առաջարկվում է վերնագրից հանել <և լրացում> բառը, քանր որ Նախագծով կատարվել է միայն փոփոխություն	Ընդունվել է: Վերնագրից հանվել է <և լրացում> բառը:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գ.Ենոքյան	<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին> ՀՀ օրենքի նախագծի 14-րդ հոդված	2. Աղբահանության վճարը սահմանվում է՝ 1) կենցաղային աղբի համար՝	Նախագծի 14-րդ հոդվաը լրացնել նոր 1.1-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ <Սույն հոդվածի 1-ին կետով	Ընդունվել և լրաշմակվել է:

		ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող յուրաքանչյուր բնակչի համար՝ առավելագույնը ամսական 400 դրամ, , կամ բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար առավելագույնը 25 դրամ. 2) ոչ կենցաղային աղբի համար՝ ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ առավելագույնը 1700 դրամ, կամ բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ առավելագույնը 5000 դրամ, կամ գ. ըստ ոչ բնակելի շինության զբաղեցրած մակերեսի՝ 1 քմ մակերեսի հաշվով առավելագույնը 250 դրամ. 3) խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ խոշոր եզրաչափի աղբի տեղափոխման համար նախատեսված հատուկ կոնտեյներների քանակի՝ յուրաքանչյուր կոնտեյների համար առավելագույնը 10000 դրամ: 2. Աղբահանության վճար սահմանելու համար կիրառվող մեթոդները և աղբահանության վճարի դրույքաչափերը յուրաքանչյուր համայնքի համար սահմանվում է համայնքի ավագանու կողմից օրենքով սահմանված կարգով՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի սահմաններում:	սահմանված դրույթները չեն տարածվում այն ֆիզիկական անձանց վրա, որոնք չեն բնակվում տվյալ բնակարանում կամ բնակելի շինության մեջ և /կամ/ իրավաբանական անձանց վրա, որոնք տվյալ ժամանակահատվածում չեն իրականացնում տնտեսական գործունեություն:	

		3. Աղբի տարբեր տեսակների համար կարող են սահմանվել տարբեր դրույքաչափեր: Ընդ որում, տարբեր դրույքաչափեր սահմանելիս կարող են հաշվի առնվել նաև անշարժ գույքի նպատակային կամ գործառնական նշանակությունը,:		
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ս. Բալասանյան	<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին> ՀՀ օրենքի նախագծի 14-րդ հոդված 1-ին մաս 2-րդ կետի <գ> ենթակետ	ըստ ոչ բնակելի շինության զբաղեցրած մակերեսի՝ 1 քմ մակերեսի հաշվով առավելագույնը 250 դրամ.	Առաջարկվում է 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <գ> ենթակետը հանել	Ընդունվել է և հանվել է կետը:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ա.Նռանյան, Գ. Գևորգյան	<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին> ՀՀ օրենքի նախագծի 14-րդ հոդված 1-ին և 2-րդ մասեր	1. Աղբահանության վճարը սահմանվում է՝ 1) կենցաղային աղբի համար՝ ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող յուրաքանչյուր բնակչի համար՝ առավելագույնը ամսական 400 դրամ, , կամ՝ բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար առավելագույնը 25 դրամ. 2) ոչ կենցաղային աղբի համար՝ ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ առավելագույնը 1700 դրամ, կամ բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ առավելագույնը 5000 դրամ, կամ գ. ըստ ոչ բնակելի	Առաջարկվում է 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթների համաձայն՝ աղբահանության համար համայնքի ավագանու կողմից հաստատված սակագների միջև ընտրությունը վերապահել վճարողին, ինչպես նաև 20 անգամ պակասեցնել աղբահանության համար նախատեսվող վճարումները:	Չի ընդունվել:

		շինության զբաղեցրած մակերեսի՝ 1 քմ մակերեսի հաշվով առավելագույնը 250 դրամ. 3) խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ խոշոր եզրաչափի աղբի տեղափոխման համար նախատեսված հատուկ կոնտեյներների քանակի՝ յուրաքանչյուր կոնտեյների համար առավելագույնը 10000 դրամ: 2. Աղբահանության վճար սահմանելու համար կիրառվող մեթոդները և աղբահանության վճարի դրույքաչափերը յուրաքանչյուր համայնքի համար սահմանվում է համայնքի ավագանու կողմից օրենքով սահմանված կարգով՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի սահմաններում:		
ՀՀ կառավարություն	<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին> ՀՀ օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մաս	Ոչ կենցաղային աղբ առաջացնողները ազատվում են աղբահանության վճարից, եթե նշված աղբը փոխադրվում և տեղադրվում է սեփական միջոցներով՝ սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված թույլտվության հիման վրա կամ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրի հիման վրա:	Շինարարական և խոշոր եզրաչափի աղբ առաջացնողները ազատվում են աղբահանության վճարից, եթե նշված աղբը փոխադրվում և տեղադրվում է սեփական միջոցներով՝ սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված թույլտվության հիման վրա կամ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրի հիման վրա:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին> ՀՀ օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մաս	Իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համայնքի ավագանու սահմանած պահանջներին համապատասխան	Առաջարկվում է <ոչ կենցաղային> բառերը փոխարինել <շինարարական և խոշոր եզրաչափի> բառերով	Ընդունվել է:

		կարող է իրականացնել ոչ կենցաղային աղբի հավաքումը և փոխադրումը սույն հոդվածով նախատեսված՝ աղբի հավաքման և փոխադրման թույլտվության հիման վրա: Աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ կարող են տրամադրվել նաև ոչ կենցաղային աղբի աղբահանության վճար վճարողներին՝ աղբն ինքնուրույն հավաքելու և փոխադրելու համար:		